

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

**« 16 » փետրվարի 2012 թ. նիստում**

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

# **«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1. Սույնով սահմանվում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ ԳՊՄԻ/ մագիստրատուրայի ընդունելության կարգը /այսուհետ՝ կարգ/:
- 1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին ՀՀ օրենքը», «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ինստիտուտի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»:
- 1.3. Մագիստրատուրա մրցույթային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ ունեցող անձինք: Այլ պետությունների բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:

### **2. ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

- 2.1. ԳՊՄԻ-ի մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի հիմունքներով: Ըստ մասնագիտությունների անվճար և վճարովի

տեղերի բաշխումը կատարում է ռեկտորատը՝ ԿԳՆ կողմից հաստատված տեղերի շրջանակներում:

2.2. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով և նախագահությամբ ձևավորվում է **ընդունող հանձնաժողով**, որի կազմում ընդգրկվում են կազմակերպության ուսումնական գծով տեղակալները, մագիստրատուրայի աշխատանքներով զբաղվող ստորաբաժանման ղեկավարները, ինչպես նաև ֆակուլտետի ղեկանները: Մրցույթն անցկացման համար ձևավորվում են **առարկայական հանձնաժողովներ**, որոնց կազմում ընդգրկվում են ինստիտուտի մագիստրոսական մասնագիտական ծրագիրն իրականացնող ամբիոնների վարիչները և համապատասխան ոլորտի հայտնի մասնագետները:

2.3. Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրում և քննարկում է դիմորդների ներկայացրած փաստաթղթերը և ըստ մասնագիտությունների առարկայական հանձնաժողովները իրականացնում են մրցույթ:

Ինստիտուտի ռեկտորը ընդունող և առարկայական հանձնաժողովների կողմից ներկայացված արձանագրությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

### 3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 2 փուլով.**

3.1. **Առաջին փուլով** անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ինստիտուտի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և/կամ ամփոփիչ ատեստավորման քննություններից ստացել են «լավ» կամ «գերազանց» գնահատականներ: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների գնահատականների միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի երաշխավորմամբ: Հավասար ՄՈԳ-ի առկայության դեպքում հերթականությամբ հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

- 1) գերազանցության դիպլոմը ,
- 2) ավարտական աշխատանքների և ամփոփիչ ատեստավորման գնահատականները,
- 3) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության միջին որակական գնահատականը կամ միջին գնահատականը /հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցող շրջանավարտներին/:
- 4) տպագրված գիտական աշխատանքները, թեզիսները:

3.1 կետի պահանջները բավարարող, բայց մրցութի արդյունքում պետպատվեր համակարգում չընդգրկված այն դիմորդները, որոնց դիպլոմի հավելվածում գրանցված բոլոր գնահատականների միջինը ֆիզիկամաթեմատիկական և

բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի համար «66» և ավելի, իսկ մյուս ֆակուլտետների համար «71» և ավելի միավոր է, վճարովի համակարգ ընդունվում են առանց քննության, մրցույթով՝ ընդունող և առարկայական հանձնաժողովների արձանագրության հիման վրա:

3.2. **Երկրորդ փուլով** վճարովի համակարգ կարող են դիմել ինստիտուտի և այլ բուհերի ընթացիկ կամ նախորդ տարիների տվյալ մասնագիտությամբ շրջանավարտները, ինչպես նաև նրանք, ովքեր փոխում են մասնագիտական ուղղվածությունը: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով:

#### 4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

4.1. Մագիստրատուրայի ընդունելության առաջին և երկրորդ փուլերից մեկ ամիս առաջ հանրապետական նշանակության որևէ թերթում տպագրվում է մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ համապատասխան հայտարարություն:

4.2. Առաջին փուլով մագիստրատուրային ընդունելության համար գործերի ընդունումը կատարվում է ընթացիկ տարվա **հունիսի 1-ից մինչև հունիսի 4-ը: Երկրորդ փուլով՝ օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի 20-ը:**

4.3. Ինստիտուտի մագիստրատուրայի դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում-հայտ /լրացվում է տեղում/
- բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում

բարձրագույն

կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին)

- Ինքնակենսագրություն
- 4 լուսանկար (3/4 չափի)
- հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում):

## 5. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա **հունիսի 6-ից մինչև հունիսի 9-ը:**

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա **օգոստոսի 21-ից մինչև 31-ը:**

### 6. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՄԿԻՉՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

- 6.1. Մագիստրատուրայի առաջին կուրսի դասերը սկսվում են **սեպտեմբերի 5-ից:**
- 6.2. Մագիստրատուրայի վճարովի համակարգի մրցույթը հաղթահարաց ուսանողների հրամանագրումը կատարվում է մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո՝ **15 օրվա** ընթացքում՝ ուսման վարձը վճարելու պայմանով:
- 6.3. Մինչև **սեպտեմբերի 25-ն** ընկած ժամանակահատվածում հրամանագրված, սակայն դասերի չհաճախելու պատճառով թափուր մնացած անվճար և վճարովի ուսուցման համակարգի տեղերը մեխանիկորեն համալրվում են՝ անմիջապես հաջորդը համարվող շրջանավարտների տվյալներին համապատասխան՝ վերջիններիս դիմումների հիման վրա:
- 6.4. Բուհը մագիստրոսի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը նախապես տրամադրվում է դիմորդին:
- 6.5. Մագիստրոսները բուհի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, հանրակացարաններից և այլ հնարավորություններից:
- 6.6. Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց տրվում է բուհի ավարտական փաստաթուղթ (մագիստրոսի դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով: